

➤ **Մ. Մեռլո-Պոնտի** (ֆրնս.՝ Maurice Merleau-Ponty, 1908 – 1961 թ.),

որ երեւութաբանութեան օժանդակութեամբ կը փորձէ մարդկային գիտակցութեան եւ բնութեան միջեւ գտնուող յարաբերութեան նոր բնորոշում մը տալ: Ֆրանսացի փիլիսոփային համաձայն՝ «*մարդը աշխարհին հանդիման չէ կանգնած, այլ ան կեանքէն ու աշխարհէն մաս մըն է*»:

Իր գլխաւոր երկերը կը նկատուին.- «*Վարքի կառուցումաձքը*» (1942 թ., ֆրնս. բնագիր՝ „La Structure du comportement“, անգլ.՝ „The Structure of Behavior“), գլուխ-գործոց նկատուող «*Իմացութեան երեւութաբանութիւնը*» (1945 թ., ֆրնս. բնագիր՝ „Phénoménologie de la perception“, անգլ.՝ „Phenomenology of Perception“) եւ «*Տեսանելին ու անտեսանելին*» (1964 թ., ֆրնս. բնագիր՝ „Le Visible et l’invisible“, անգլ.՝ „The Visible and the Invisible“): Այս վերջին, բաւական ուշ ու յետ մահու հրատարակուած երկին մէջ, Մեռլո-Պոնտի, Էաբանական մօտեցումով մը կը քննարկէ ենթակայի (Subject) եւ առարկայի (Object) անխզելի կապը:

➤ **Ժ.-Պ. Սարտրը** (ֆրնս.՝ Jean-Paul Sartre, 1905 – 1980 թ.),

Ֆրանսացի վիպասան, հրապարակագիր եւ փիլիսոփայ Սարտրը, առաջին հերթին կը ներկայանայ որպէս գոյապաշտութեան⁽³⁹⁾ (Existentialism) գլխաւոր ներկայացուցիչներէն մէկը, որու գոյապաշտութիւնը մեծապէս ազդուած է՝ Հոլստեմի եւ Հայդեգերի երեւութաբանութենէն: Սարտրի համաձայն՝ «*մարդ, իր պատահական ծնունդով գոյութեան գիրկը կը նետուի ու իր գործօն փորձով պէտք է կեանքը իմաստաւորէ*»:

1964 թուականին, Ժ.-Պ. Սարտրը կ'արժանանայ գրականութեան Նոպէլեան մրցանակին, զոր սակայն կը մերժէ ընդունիլ: Սարտրը, որպէս հանրածանօթ հրապարակագիր ու հրապարակախօս ունեցաւ նաեւ քաղաքական բեղուն գործունեութիւն (շրջան մը ան եղած է նաեւ համայնավար կուսակցութեան անդամ):

2. ՄԱՐԴԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Փիլիսոփայական մարդաբանութեան (Anthropology) արմատները կարելի է փնտռել հնադարեան Արիստոտէլի մօտ, որուն համաձայն մարդը (յուն.՝ *ánthrōpos*) իր իւրայատուկ տեղը ունէր՝ որպէս «բանաւոր եւ ընկերային կենդանի»: Այնուհետեւ, 17-րդ դարուն, ֆրանսացի փիլիսոփայ **Ռ. Դեկարտ** (René Descartes, 1596 – 1650 թ.) փիլիսոփայական նոր զաղափարով մը հաստատէր մարդու կեցութիւնը, երբ կ'ըսէր.- «*կը մտածեմ, հետեւաբար գոյութիւն ունիմ*» (լատ.՝ „Cogito, ergo sum“): Փիլիսոփայական մարդաբանութիւնը, սակայն, որպէս փիլիսոփայական ուղղութիւն ծագում առած է Գերմանիոյ մէջ, երբ 18-րդ

(39) **Գոյապաշտութիւն** (Existentialism) կամ *գոյութեան փիլիսոփայութիւն* ուղղութեան մասին, տե՛ս Մաս – 2, Էջ 95: